պերը։ Առանձնապես ընդգծվեց, որ այսուհետև պետք է աշխատել թարգմանություններ անել հենց բնագրից, թարգմանելիս ընտրություն կատարել, որպեսզի ճիշտ ներկայացվի, թե ինչով է ապրում, շնչում տվյալ ժողովուրդը, որը և ըստ էության ավելի կենսական ժողովուրդների հոգևոր իրական փոխհարստացմանը։ Վ. Վավերեն մերձբալթյան իր գործընկերների անունից շնորհակալություն հայտնեց շերմ ընդունելության և Նստաշրջանի աշխատանքները բարձր կազմակերպվածությամբ անցկացնելու համար։ Նա ասաց, որ թեպետ աշխարհագրական դիրքով Հայաստանը և Մերձբալթիկան բավական հեռու են, սակայն վերջին շրջանում կատարվող հայտնի իրադարձությունները առավել սերտորեն մերձեցրին նրանց ժողովուրդներին։

Վերջում Նստաշրջանի արդյունքներն ամփոփեց ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանը։ Նա մասնավորապես ասաց, որ Նստաշրջանի գումարումը մի քանի անգամ հետաձգվել է, որի պատճառը հանրապետության ներքին իրավիճակն էր։ Ոմանք ասում էին, որ այս պայմաններում իմաստ չունի կազմակերպել նստաշրջան։ Սակայն, մեր կարծիքով, շարունակեց Էդ. Ջրբաշյանը, հենց միայն բարոյական աջակցություն ցույց տալու, մեր ժողովուրդների այսօրվա կյանքը ճիշտ ըմբռնելու համար այն պետք էր անհապաղ հրավիրել։ Եվ այդ առումով մեր սպասելիքները իրականացան։ Նստաշրջանը ոչ թե սոսկ հերթական միջոցառում էր, ասաց նա, այլ եղբայրական ժողովուրդների մտավորականների հանդիպում՝ հայ ժողովրդի արդար պահանջը և՛ հոգևոր, և՛ քաղաքականապես սատարելու համար։ Մենք հաստատապես համոզվեցինք, որ մերձբալթյան ժողովուրդների մտավորականները մեզ հետ են։

Ա. Հ. ՉԱՔԱՐՅԱՆ

ՀՍՍՀ ԳԱ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲԱԺՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Մ/թ հոկտեմբերի 24—25-ը Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բաժնի գիտական նստաշրջանը։ Այն ներածական խոսքով բացեց ՀՍՍՀ ԳԱ սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու Կ. Լ. Դալլաքյանը։

Պատմական գիտությունների թեկնածու Հ. Հ. Մարտիրոսովի զեկուցումը նվիրված էր երկրի պառլամենտում, պետական և վարչական մարմիններում լիբանանահայերի ներկայացուցչությանը։ Զեկուցման մեջ նշվեց, որ, ելնելով համայնքների ինքնավարության սկզբունքներից, Լիբանանում յուրաքանչյուր համայնքի ներքին կառավարումը և երկրի ղեկավար մարմիններում բաշխման կարգը սահմանվում են ըստ կրոնական հատկանիշի։ 1929 թ. ի վեր հայերը մասնակցություն ունեն Լիբանանի պառլամենտական ընտրություններում։ 1960 թ. մինչև 1972 թ. և 1975—1976 թթ. քաղաքացիական պատերազմը նախորդող ընտրություններում հայ համայնքից երկրի պառլամենտում ընտրվել է 5-ական պատգամավոր։ 1957 թ. մինչև 1975—1976 թթ. քաղաքացիական պատերազմը հայերը Լիբանանի պառլամենտում ունեին մեկ փոխնախագահ, իսկ մինիստրների թվում՝ երկու ներկայացուցիչ։ Այս իրողությունն աննախադեպ է նրկա սփյուռքում։

Պատմական գիտությունների թեկնածու Հ. Լ. Փանիլանյանի «Իրանա-իրաքյան պատերազմը և հայերը» զեկուցման մեջ ցույց տրվեց, որ 1978—1979 թթ. Իրանում տեղի ունեցած հեղափոխությունը ժողովրդի սոցիալ-տնտեսական էյանքում և ոչ մի էական փոփոխություն չըմտցրեց, սակայն ազգային փոքրամասնությունների շարժումը զգալիորեն ուժեղացավ՝ հանգեցնելով ներքաղաքական իրադրության որոշ սրմանը։ 1980 թ. սեպտեմբերին սկսված իրանա-իրաքյան պատերազմը ժամանակավորապես հետին պլան մղեց ազգային փոքրամասնությունների ինքնավարության հարցերը և նախնական շրջանում նպաստեց ազգային միասնության հարաբերական ամրապնդմանը։ Հայերն Իրանի մյուս ազգային փոքրամասնությունների նման դեմ էին այդ պատերազմին։ Սակայն համայնքի դիրքորոշումը պահպանելու նպատակով նրանք պատրաստակամություն հայտնեցին մասնակցելու այդ պատերազմին։ Իրանի բոլոր հայաշատ վայրերում ստեղծվեցին պատերազմի օգնության կոմիտեներ։ Ռազմաճակատում էին մեծ թվով հայ ռազմիկներ, որոնցից շատերը զոհվեցին (բժիշկներ, բուժակներ, մեխանիկներ, վարորդներ և այլ մասնագետներ)։ Իրանա-իրաքյան պատերազմը Իրանի աշխատավորության, այդ թվում նաև հայերի տնտեսական վիճակը խիստ վատթարացրեց։ Դրա հետևանքով իրանահայության քանակը սկսեց նվազել։ Ապրուստ հայ-

թայթելու միտումով զգալի թվով իրանահայեր սեղափոխվում էին այլ երկրներ։

Պատմական գիտությունների թեկնածու Ս. Մ. Մուրադյանի զեկուցման թեման էր «Սիրիայի բուրժուազիայի հայկական հատվածի դիրքերը Սիրիայի տնտեսության մեջ (1945—1980 թթ.)»։ Նա նկատեց, որ Սիրիայի հայ բուրժուազիան կազմել է երկրի ազգային բուրժուազիայի բաղկացուցիչ մասը և սիրիական բուրժուազիայի նման հովանավորության կարիք է ունեցել։ Ֆրանսիական մանդատի տարիներին Սիրիայի փոքրաթիվ հայությունը հիմնականում զբաղված էր առևտրով ու միջնորդությամբ։ Անկախության տարիներին այլազգի ձեռնարկատերերի գործունեության համար ստեղծված բարենպաստ պայմանների շնորհիվ խոշոր հայ ձեռնարկատերերը մտան Սիրիայի իրենց գործընկերների ստեղծած ընկերությունների հիմնադիրների կազմի մեջ։ Միջին և մանր ձեռնարկատերերը հիմնադրում էին ընտանեկան ֆիրմաներ ու այլ տիպի ձեռնարկություններ։ Նրանց ձեռքում էր գտնվում օպտիկական, լուսանկարչության, հագուստի և կոշիկի վերանորոգման գործը։ Հայ ձեռնարկատերերը, լինելով ազգային փոքրամասնության ներկայացուցիչներ, միշտ էլ պետք է հարմարվեին տվյալ ժամանակահատվածում գործող քաղաքական ուժերին։

Ռ. Գ. Սարգսյանի զեկուցումը նվիրված էր Լիբանանի հայկական վարժարաններում ազգային կրթության և դաստիարակության հարցերին։ Լիբանանահայ համայնքը, ասաց զեկուցողը, իր գոյության ընթացքում ստեղծել է կրթադաստիարակչական հիմնարկների լայն ցանց, որը վկայում է լիբանանահայության կրթասիրությունն ու կենսունակությունը։ Լիբանանի հայկական դպրոցներն անգամ ներկայիս քաղաքական և տնտեսական անկայուն ու բարդ իրավիճակում աչքի են ընկնում ուսումնական բարձր մակարդակով և կարևոր դեր են խաղում մատաղ սերնդին ազգային ոգով դաստիարակելու գործում։

1978—1979 թթ. իսլամական հեղափոխության ժամանակ Իրանի հայ համայնքի վիճակին էր նվիրված Մ. Ա. Հովսեփյանի զեկուցումը։ Նա նշեց, որ հեղափոխության առաջին շրջանում դաշնակցություն կուսակցության Իրանի մասնաճյուղերն ու թեմական խորհուրդները չեզոք դիրքորոշում բռնեցին երկրում կատարվող իրադարձությունների նկատմամբ։ Հետագայում անհրաժեշտ միջոցներ ձեռնարկվեցին իրանահայ համայնքի անվտանգության ապահովման ուղղությամբ։ Վերջում զեկուցողը նկատեց, որ Իրանում հեղափոխական շարժման վերելքի պայմաններում հայ համայնքում ի հայտ եկան դեմոկրատական նոր ուժեր։

Հ. Ե. Ղազարոսյանի զեկուցումը նվիրված էր ստամբուլահայության 1955 թ. կոտորածներին և դրանց նախապայմաններին։ Զեկուցման մեջ ցույց տրվեց, որ 1955 թ. սեպտեմբերի 6—7-ը Ստամբուլը և մասամբ Իզմիրը դարձան հունական և հայկական կոտորածների թատերաբեմ։ Դա Թուրքիայի պատմության մեջ պատահական իրադարձություն չէր և նոր փուլ էր հայ ժողովրդին ոչնչացնելու նպատակով Թուրքիայի վարած պետական հանցագործ քաղաքականության մեջ։

«Գ. Յանիկյանի «Ճշմարտության համար կամ բանտարկյալիս ձայնը» հուշերը» թեմայով հաղորդումով հանդես եկավ Վ. Լ. Բաղդասարյանը։ 1973 թ. Լոս Անջելեսում երկու թուրք դիվանագետների սպանության մեղադրանքով ցմահ բանտարկության դատապարտված Գ. Յանիկյանի բանտում գրված անտիպ հուշերը, նկատեց նա, հուշագրողի ահաբեկչական գործունեության կապակցությամբ ամերիկահայ գաղութում տեղի ունեցած խմորումները լուսաբանելու կարևոր աղբյուր են։

Պատմական գիտությունների թեկնածու Մ. Դ. Տեր-Գրիգորյանն իր զեկուցման մեջ անդրադարձավ ամերիկահայ համայնքի էթնիկ ինստիտուտներին։ Զեկուցման մեջ ցույց տրվեց, որ ԱՄՆ-ի հայ համայնքի հիմնական ինստիտուտները կազմավորվել ու ձևավորվել են անցյալ դարի վերջում և մեր դարի սկզբում։ Դրանց մի մասը երկրի սոցիալ-տնտեսական ու քաղաքական ուրույն պայմանների և վերջիններիս հետ ներգաղթածների համակերպվելու արդյունք էին։ Ինստիտուտների մյուս մասը հայ էթնոսի մշակութային ավանդական կազմակերպություններն էին, որոնք արմատներ թողեցին ԱՄՆ-ում։ Զեկուցման մեջ նաև նշվեց, որ այժմ ամերիկահայ համայնքի ինստիտուտները հիմնականում նույնն են, ինչ տասնամյակներ առաջ։ Այդ կազմակերպությունների հասարակական և քաղաքական գործունեությունը ծավալվում է ներհամայնքային կյանքում և հիմնականում նպատակամղված է պահպանելու հայ մշակույթի այս կամ այն տարրերը։

Պատմական գիտությունների դոկտոր Զ. Մ. Ղասաբյանի զեկուցման խորագիրն էր՝ «Ֆրանսահայ համայնքի սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման փուլերը (1922—1970 թթ.)»։ Ֆրանսահայ համայնքը, ասաց զեկուցողը, իր կեսդարյա պատմության ընթացքում սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման երեք հիմնական փուլ է ապրել։ Առաջին և երկրորդ փուլերում ֆրանսահայերի կեսից ավելին բանվորներ էին և հիմնականում աշխատում էին ածխ-

խահանքերում, քարհանքերում, մետաղաձուլարաններում, քիմիական, ալյումինի ու արտադրական այլ ձեռնարկություններում և որպես օտարականներ ստանում 10—15%-ով պակաս աշխատավարձ, ենթակա լինելով աշխատանքից առաջինը վտարվելու վտանգին։ Դրությունը փոխվեց երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ ֆրանսահայ համայնքը ոնակոխեց իր սոցիալ-տնտեսական զարգացման երրորդ փուլը։ Այժմ արդեն հայերի զգալի մասը զբաղված էր տնայնագործական ոլորտ արդյունաբերության ընդարձակումով։ Հանդես են գալիս հայ խոշոր արդյունաբերողներ ու առևտրական տներ։ Ֆրանսահայերը ֆրանսիական քաղաքացիներ են միջին, մանր և խոշոր բուրժուազիայի խավերում, օժտված համահավասար իրավական-քաղաքացիական իրավունքներով։

Պատմական գիտությունների ոլորտում Ռ. Լ. Մանասերյանի զեկուցման մեջ քննվեցին ֆրանսահայ համայնքում էթնիկ ինքնապահպանման գործոնները։ Զեկուցման մեջ ցույց տրվեց, որ ֆրանսահայերի էթնիկ իրավիճակի բնորոշ հակասությունն է մի կողմից ֆրանսիական մշակույթի ու ֆրանսերենի անխուսափելի ընկալումը, մյուս կողմից՝ ազգային քաղաքակրթության ու լեզվի նկատմամբ հետաքրքրության աճը, էթնիկ ինքնագիտակցության վերելքը։ Էթնիկ ինքնագիտակցության սատարման գործում կարևոր նշանակություն ունեն հասարակական ու մշակութային կազմակերպությունների գործունեությունը և Սովետական Հայաստանի հետ մշակութային կապերի զարգացումը։

Փիլիսոփայական գիտությունների ոլորտում Է. Լ. Մելոնեյանի զեկուցման խորագիրն էր՝ «Հայ սփյուռք՝ միասնական համակարգ, թե՞ տարանջատ ամբողջություն»։ Ըստ զեկուցման մեջ զարգացված թեզի, հայ սփյուռքը միասնական համակարգ, ամբողջական սոցիալ-մշակութային օրգանիզմ չէ։ Զեկուցողի կարծիքով հայ սփյուռքը զուրկ է իրեն հատուկ կառուցվածքից, այն կազմող տարրերի մեջ բացակայում են փոխպայմանավորվածության ու փոխկապակցվածության հարաբերությունները, ինչպես նաև՝ ինքնակառավարման ու ինքնակարգավորման մեխանիզմները, որոնց շնորհիվ ապահովվում է ամեն մի համակարգի լավագույն հարմարումը ներքին և հատկապես արտաքին միջավայրի բոլոր փոփոխություններին։ Հայ սփյուռքն ըստ էության ներկայացնում է որպես բազմաթիվ ու բազմապիսի համայնքների սոսկ մեխանիկական միագումար, որպես տարանջատ ամբողջություն։

Տնտեսագիտության ոլորտում Ա. Ղ. Բաբայանն իր զեկուցման նյութ էր դարձրել աղգայահպանման ընդգավառում Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) 1955—1984 թթ. ծավալած ֆինանսական գործունեությունը։ ՀԲԸՄ-ն իր ստեղծումից մինչև այսօր, ասաց զեկուցողը, հսկայական աշխատանք է կատարում աշխարհով մեկ սփռված հայությանը բալմարնույթ օգնություն ցույց տալու ուղղությամբ։ Միության նպատակն է նպաստել հայ ժողովրդի կրթական, մշակութային, ֆիզիկական, հոգևոր ու բարոյական զարգացմանը, օժանդակել նյութական կարիք ունեցող հայերին և նպաստել նրանց ընդհանուր բարեկեցության բարձրացմանը, քաջալերել կրթական հաստատությունների ստեղծումը։ Ապա համապատասխան թվական տվյալների վերլուծությամբ զեկուցողը ցույց տվեց, որ միությունն այժմ սփյուռքահայ, համահայկական հզոր և հարատևող մի ընկերություն է, որը շատ կարևոր դեր է կատարում սփյուռքի հայապահպանման ընդգավառում։

Ա. Մ. Գալանյանն իր զեկուցման մեջ անդրադարձավ հայ սփյուռքում միգրացիոն պրոցեսներին և եզրակացրեց, որ ի տարբերություն բռնությունների առաջացած արտագաղթի օղակաձև ալիքների, սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմաններն առաջ են բերում արտաքաղթի ուղղաձիգ ալիքներ։

Նստաշրջանի արդյունքներն ամփոփեց Կ. Լ. Դալլաֆյանը։